Ռափայել Պատկանյան

Հայերուս թուքը

Դուն խելոք, հաշուով վաճառական ես,
Միլք, փող ու ապրանք, կ'ասեն՝ շատ ունես. -
Բայց թէ փողէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վըրան:

Քաջ ես, լըսել ենք, ինքըդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունես փառաւոր.
Բայց թէ թըրէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թըքել ենք քու ալ, թըրիդ ալ վըրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունըդ աշխարհի փըռուած է.
Բայց թէ գըրչէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թըքել ենք քու ալ, գըրչիդ ալ վըրան:

Հեռատես մըտքով դուն զարդարեցար,
Հըզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մըտքէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թըքել ենք քու ալ, մըտքիդ ալ վըրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանգագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,

Թղթել ենք քու ալ, ձեռքիդ ալ վըրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հրոչակ ու հանճար.
Բայց թէ լեզվէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թղթել ենք քու ալ, լեզվիդ ալ վըրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովդ լըցուած է մարդոց բերան.
Թէ ուսումէդ շահ չունի ՀԱՅԱՍՏԱՆ,
Թղթել ենք քու ալ, ուսմանդ ալ վըրան:

Կու տամ քեզ պատիւ, կ'ունենաս դու յարգ,
Ու կը դընեմ քեզ ազնիւ մարդոց կարգ,
Երբ օրորանէդ մինչեւ գերեզման
Միակ ձըգտմունքըդ լինի ՀԱՅԱՍՏԱՆ:

1878